ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE41-3CF8-472C-A792 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/7787/02/25 քաղաք Երևան
29 Մայիսի 2026թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ. Գրիգորյանս (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով թիվ ԵԴ2/7787/02/25 քաղաքացիական գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Դատարանի (դատավոր՝ Ս.Երիցյան) վարույթում է գտնվել քաղաքացիական գործն ըստ հայցի «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ թիվ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/231» ծածկագրով գնահատող հանձնաժողովի 17.07.2025 թվականի թիվ 4 արձանագրության 1.2-րդ, 1.3-րդ, 1.4-րդ և 2.1-րդ կետերի որոշումներն անվավեր ճանաչելու, «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի հայտը թիվ 1 չափաբաժնի

մասով բավարար գնահատելու, ընտրված մասնակից ճանաչելու և մատակարարման պայմանագիր կնքելու մասին որոշում ընդունելուն պարտավորեցնելու պահանջների մասին, որի 29.09.2025թ. կայացված վճռով բավարարվել է մասնակի:

Դատարանի հիշյալ վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 23.04.2026թ. որոշում է կայացրել հիշյալ վճիռը մասնակի՝ հայցը բավարարելու մասով բեկանելու և գործն այդ մասով նույն քննության ուղարկելու մասին:

Հիշյալ քաղաքացիական գործը մակագրվել և էլեկտրոնային համակարգում հասանելի է դարձել 27.05.2026թ. ժամը՝ 21:31-ին::

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե սույն գլխով առանձնահատկություններ սահմանված չեն, ապա Համակարգի միջոցով իրականացվող գործողությունների վրա տարածվում են սույն օրենսգրքի ընդհանուր կանոնները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանում գործի քննությունը, իսկ վերաքննիչ դատարանում բողոքի քննությունն անցկացվում են դատարանի անփոփոխ կազմով, բացառությամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերի: Դատարանի կազմը փոխվելու կամ կազմում փոփոխության դեպքում կայացվում է գործը (վերաքննիչ բողոքը) վարույթ ընդունելու մասին որոշում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 5.1-րդ մասի համաձայն՝ դատարանի կազմը փոխվելու կամ դատական կազմում փոփոխության դեպքում գործը (վերաքննիչ բողոքը) վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը որոշում է կայացնում գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն սկզբից սկսելու կամ գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն ընդհատման պահից շարունակելու մասին, բացառությամբ առաջին ատյանի դատարանում գործի դատաքննությունն ավարտված լինելու դեպքերի: Գործի դատաքննությունն ավարտված լինելու դեպքում առաջին ատյանի դատարանը գործը վարույթ ընդունելու հետ միաժամանակ որոշում է կայացնում գործի քննությունն սկզբից սկսելու կամ գործը դատաքննության փուլից վերսկսելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի եզրափակիչ դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մասին դատական ակտ կայացնելու դեպքում դատարանը գործն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է գործը վարույթ ընդունելու մասին որոշում:

Վերոգրյալի հիման վրա՝ Դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործը պետք է ընդունել վարույթ՝ բեկանված մասով քննությունն իրականացնելու համար:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 188-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ԵԴ2/7787/02/25 քաղաքացիական գործի բեկանված մասով քննությունն իրականացնելու համար, ընդունել վարույթ:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by GRIGORYAN TIGRAN 4008820477
Date: 2026.06.01 14:46:40 AMT

ԴԱՏԱՎՈՐ՝

Տ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am